

Գիրքը լուսապատճենվել և համացանցում է տեղադրվել [Գրքամոլ Նախաձեռնության](#) կողմից:

Բոլորիդ կողմից սիրված «[Գրքամոլ](#)»-ը մեկնարկել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը ընթերցասերների հարթակում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությունը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:



Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ ու օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող գործին, ապա գրեք մեզ [grqamol@gmail.com](mailto:grqamol@gmail.com) հասցեով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

**Գրքամոլ Նախաձեռնություն**

URL: [www.grqamol.am](http://www.grqamol.am), e-mail: [grqamol@gmail.com](mailto:grqamol@gmail.com)

Աննա Խղաթյան

# ԳԻՇԵՐԱԾԱՂԻՎ



Աննա Խղաթյան

ՓԻՇԵՐԱԾԱՂԻՎ

2017

Printed By: **Yerevan Printing**  
Glendale, CA 91204  
818-246-2070



## Աննա Խլղարյան

### ԳԻՇԵՐԱԾԱՂԻԿ

Ամեն անգամ, մի զարմանալի զգացողություն է ինձ համակում, երբ նոր դեռևս չկարդացած գիրք եմ բացում: Զգացողություն, որի անունը ակնկալիք է և սպասում...

Ակնկալիք, որ էջ առ էջ շփվելու եմ մի նոր ու տակավին անծանոթ հոգևոր բևեռի հետ և... սպասման ստվեր, որ այդ նորն ու անծանոթն իմ ժառանգական արյան տեղանքին հարագատ լինի՝ իմը լինելու և իրենով սքանչանալու չափ...

Երևի հենց սա է բանաստեղծության այն մոգական խոր-  
հուրդը, որ սպիտակաթույր թղթի սևավոր արարչությամբ  
վախանցվում է հոգուն: Նույն կամ գրեթե նույն զգացո-  
ղությամբ վերջերս բացեցի Քրիստինե (Աննա) Խլղարյանի  
լանդաստեղծությունների «Գիշերածաղիկ» անտիպ ժողո-  
վածուն: Առաջին զգացումը, որ ունեցել եմ ճշմարիտ,  
Լյուսիտ եմ ասում, դա զարմանքն էր: Չարմանք, որ կորու-  
սյալ «հրեշտակների» այս խայտաճամուկ համայքի գրական  
համանվագում, այդ ինչպես է, որ անհայտ է մնացել, չի լսվել  
այդ ընթացին՝ միևնույն ժամանակ արցունքի պես փխրուն,  
ու նաև հուզա-տրամաբանական ենթաշերտերով լեցուն  
նրա բանաստեղծական երգեցիկ մեղեդիները: «Բառի և

աշխարհի» վաղուց հնացյալ մտերմությունը բանաստեղծուհին վերծանում է յուրովի և նրա հոգևոր խորհուրդը թերևս սկսվում է ներշնչանքից, վերնագրից, առաջին բառից, առաջին պատկերից, ուր բառը ոչ թե բեռնաձիու նման քարշ է տալիս բանաստեղծության զգացական մագման ու գաղափարը, այլ դառնում է յուրովսան լապտեր ու լուսավորում է ներաշխարհի «հավիտյան գոց ու անխոս» դռներն ու էությունը: Դրանց ճշմարտացի արտացոլանք-մեկնաբանությունը ինքնին «Ամենեն կարևոր հիմնաքարերեն մեկն է մեծ գրականության ճանապարհին», - Հակոբ Օշական:

«Գիշերաձաղիկ» ժողովածուի երկու քերթողական շարքերում. («Ճակատագիրդ անուն էլ ունի» և «Լուսության աղմուկ») զետեղված յուրաքանչյուր բանաստեղծություն նախ դեպի ներս, ապա դեպի դուրս, դեպի աշխարհը գողտրիկ ացված մի պստիկ պատուհան է, ուսկից «խոհականին և սրտահույզին հակված հոգիները» (Ռիլկե) կառնչվեն ու հաղորդակից կդառնան մի ուրույն ու դրամատիկ մենաներկայացումի, Մի գիշերում աննկատորեն բացվող գիշերաձաղիկի մտապատրանքի պես: Մութն ի լույս նա զուգվում է ամենա-ամենաուրախ ու ամենատխուր գույներով, որ վաղ լուսաբացին իր գունափոխված հուշը նկատեն, և մոռացության մշուշը, ինչքան էլ խիտ լինի, չկարողանա համահարթել գիշերային տառապանքից ծնված Աստծո լույսն ու օրվա երազանքը: Գեղագիտական նոր հիմունքներով և գեղեցիկի ընկալման նորովի երփնագույնով է բանաստեղծուհի Քրիստինե (Աննա) Խլղաթյանը մատուցում իր հույզերն ու տազնապները, որոնց տողատակերի սևահողերում են թաքնված ասելիքի ծանրությունն ու խորքային ընդվզումները: Նրա հոգևոր ես-ը բազում ես-երի համագումար

լինելուց զատ իր իսկ ապրած կարճ ու երկար կյանքի ու կենսագրության կենսատարածքն է: Կենսատարածք, որտեղ ձևկատագիրը ինչ-որ մեկի տխուր կամ ուրախ երկվորյակն է, որտեղ իրերը ունեն կախարդական հատկություն և տրամադրության ստվերում փոփոխվում են, որտեղ շուտապելիս հաճախ ուշանում են և շփոթում երեկների ու վաղերի տեղերը, որտեղ միայնությունից սկսվող հիշողության գետը հազարամյա ավանդույթներ է տանում սիզախոտերի տամկությամբ բուրոդ աշունների և գարունների միջով: Այդ հուշաշխարհում, առաջին հայացքից թվում է թե բոլորը կան, տները իրենց վաղնջական ու մամռակալ շուքերով, ծաղիկները, որոնք ցողապատկեր անորադարձն են կրում երկնքի ու մեր հոր՝ Ամենահոր, Սրբերը, Սուրբ գրքից էլ ծեր մարդիկ ու հավատալիքները, սպիները, որոնք իրենց պատրանքներն են գունավոր լաթերի պես կախել պատուհաններից, որ հրեշտակները չմոլորվեն հանկարծ: Այդ հուշաշխարհում կարոտը ամենատաք բառն է, և բառից այն կողմ նաև լռության կանչ է, ներսի ու դրսի, արտաշխարհի և այլաշխարհի միջև մի անտես կամուրջ, որ հիշողության ու ամիսսանքի տեսիլներով է լեցուն: Այսպես սուղ առ տոդ, պատկեր առ պատկեր, տաղ առ տաղ բանաստեղծուհին կերտում է իր ներաշխարհի հոգևոր տեղանքը: Դժվար ու առեղծվածային մի ուխտագնացություն էսից մինչ ես, ուր գեղազետ գրչով սփռվում են թարմաբույր պտտկերներ, ալեվետ հույզեր, մերթ խղճի, մերթ հուշանորադարձի, մերթ կորստի ու մերթ հայտնության երանգներով: Հոգևոր այդ կենսատարածքում բոլոր գույները անվառվալի են մի գույնի մեջ՝ ինչպես ձայնը խեցու որպես ու խառնվում են իրար արթմսին ու երազային, իրականն ու հորինումը՝ այն հեռու ու բարի ժամանակներում, երբ

Ճյուղավորված ճանապարհները մի են գալիս և հորդում են նախ դեպի եկեղեցի և ապա հանգրվանում կենաց ծառի կապտագառաւ արմատներում:

Վերջում ինձ ժամում է լոկ «սրտիկս ի բաց» հավատալ, որ տարիների և կենսափորձի հետ էլ ավելի կխորանա բանաստեղծուհու ասելիքի հոգեշերտերը և էլ ավելի կլայնանա «եղեմական հմայության եզերքը» ( Է.Վերհարն), իսկ քեզ սիրելի ընթերցող՝ հավաստիացման պես մաղթում եմ՝ կարդա այս գիրքը, կարդա՝ ինքդ քեզ փնտրելով այնտեղ ու ակնկալիքի ու հայտնության ով գիտե, որ պատկերային կեոմանում կհանդիպես ինքդ քեզ ու կսիրես քո տեսակի լեզենդն ու միայնությունը:

Վազգեն Վանատուր



Ճակատագիրդ անուն էլ ունի՝

---

# Լէյլընտրանք

Վո՛ւ իմ անցյալն ես,  
Վա՛սմ էլ անցյալիս կենդանի վկան,  
Վո՛ւ իմ ներկան ես,  
Վա՛սմ էլ ներկայիս միակ գործվը,  
Վա՛սն իմ վաղն ես,  
Վա՛սմ էլ իմ վաղվա լուսե ստվերը:  
Վա՛սմ դու իմ սիրտն ես,  
Վա՛սմ էլ սրտիս մեջ լցվող արյունը,  
Վա՛սմ դու իմ կյանքն ես,  
Վա՛սմ էլ մի նոր խոսք իմ կյանքի համար,  
Վա՛սմ իմ հոգին ես,  
Վա՛սմ էլ իմ հոգու խաղաղությունը:  
Վա՛սմ դու իմ լույսն ես,  
Վա՛սմ էլ իմ լույսի միակ վառողը,  
Վա՛սմ դու իմ հույսն ես,  
Վա՛սմ էլ հույս ծնող բյուրեղյա արգանդ,  
Վա՛սմ դու իմ սերն ես,  
Վա՛սմ էլ սեր բառի բացատրությունը,  
Վա՛սմ իմ հավատքն ես,  
Վա՛սմ հավատք կոչվող այդ հզոր ուժը,  
Վերն էլ որ լինես,  
Վերստի գտնվես  
Վո՛ւ սիրագործվ նուրբ բոլորումս ես,  
Վայսքան թվարկած երկար շարանիս:

# Ասում էիր

Ու ասում էիր դու,  
Որ էլ չես սիրի,  
Որ կոտորվել են հենակներդ ողջ,  
Ինչին հենված էին քո սիրտը սիրող,  
Հոգիդ՝ լուսավոր,  
Տեսակդ՝ բարի:

Ու ասում էիր դու՝  
Որ էլ չես սիրի,  
Որ մահացել է քո ողջը արի,  
Ում հավատում էին քո սիրտը սիրող,  
Հոգիդ՝ լուսավոր,  
Տեսակդ՝ բարի:

Ու ասում էիր դու,  
Որ էլ չես սիրի,  
Ու ոչ մեկի հետ սիրտդ չի մարի,  
Ինչպես մարում էին քո սիրտը սիրող,  
Տեսակդ՝ տիրող  
Ու հոգիդ՝ բարի:

Ու ասում էիր դու,  
Որ էլ չես սիրի,  
Ու էլ ոչ մեկին քեզ չես նվիրի,  
Ոնց նվիրել էիր քո սիրտը սիրող,  
Հոգիդ՝ լուսավոր,  
Տեսակդ՝ բարի:

Ու տառով է իր դու  
Որ էլ չես սիրի,  
Էսպի ելիմու նստել ինձ ես սպասում  
Ու խնձուկ է ողջ,  
Քս սիրտը սիրտը,  
Շողիլի լուսամուր,  
Կեանքի լուսիլ:



## Արի չխոսենք

Աչքախաբություն կամ տեսլիք լուսե,  
Այո՛, այստեղ ես,  
Բնավ երազ չէ,  
Մեկ ցանկանում եմ շոշափել ես քեզ,  
Մեկ վախենում եմ՝  
Իմ ձեռքերի տակ կհալչես գուցե:  
Կանգնել ես անշարժ, հատակին միաված,  
Դողում է շունչդ, լեզուդ է սառչած,  
Ու վախենում ես ողջունել անգամ,  
Կոպերդ, նույնիսկ, վեր չես բարձրացնում,  
Ասես նրանցից ամոթն է կախված:  
Ինչո՞ւ ես եկել,  
Իսկ ո՞ւր էիր, չկայիր,  
Եկել ես ասես թե ո՞ւր էիր կորել,  
Գուցե բացատրես ինչո՞ւ չես կանչել,  
Եկել ես տեսնես ողջ եմ, թե՞ մեռած,  
Գուցե ե՞ս տեսնեմ քո ողջը մեռած...  
Այս ինչքա՛ն հարց կա ու ասելու բան,  
Այս ինչքան ցավ կա ու ներելու բան,  
Բայց եթե կանգնենք անշարժ մեր տեղում  
Ու իրար ասենք ինչ կա ու չկա,  
Պատմենք մեկմեկու,  
Թե մեզ հարազատ անցյալից բարի,  
Հիմա մեր կողքին ով կա ու չկա,  
Գուցե շրջվես ու դու ետ դառնաս,  
Դրա համար էլ արի չխոսենք,  
Դե ձեռքիցդ դի՛ր,

Կողթողի պիտակն անձիդ հավելող այդ ճամպրուկդ սև  
Ու ձեռքդ ինձ տուր,  
Կրկին ինձ ամուր,  
Մեր չապրած կյանքից,  
Այսօր-չարածից արի չխոսենք...



## Արցունքների միջից

Ինչո՞ւ աչքերդ երբեք չեն ժպտում,  
Ինչո՞ւ, երբ անգամ դու ծիծաղում ես,  
Դեմքիդ նայողի աչքերն են լցվում,  
Իսկ քո աչքերը մի կետի հառած՝  
Քո այդ ժպիտին չեն էլ մասնակցում:  
Դու այդքան քնքուշ,  
Այդքան գեղեցիկ,  
Ինչո՞ւ ես փակվել «ես»-իդ անկյունում,  
Քո հոգու խորքում ի՞նչ ես թաքցնում,  
Կամ գուցե և ո՞ւմ...  
Այնքան վաղուց ես հոնքերդ կիսել,  
Որ մատղաշ դեմքիդ ծալքեր են կիսվել,  
Ինչո՞ւ ես այդքան հաճախ արտասվում,  
Ո՞ւմ ես խոսք տվել իրենից հետո երբեք չխնդալ,  
Այնքան չեմ տեսել ծիծաղիդ ձևը,  
Որ ինձ թվում է հենց այդ թախիծն է քո դեմքին սազում,  
Ինձ կասե՞ս ինչու:



# Եւ շտապեցի իսկ դու ուշացար

Եւ շտապեցի իսկ դու ուշացար,  
Եւ ավարտել եմ, դու նոր ես սկսում,  
Եւ ավարտել եմ, բայց եթե անկեղծ՝  
Եոր պիտի նորը քեզ հետ սկսեի:  
Վու ուշացել ես,  
Բայց թե իմանայի ճանապարհին ես,  
Մի րիչ կսպասեի:  
Քո սկսելը ինձ ետ է տանում իմ սկսելուն...  
Ետ րայլն անկում է,  
Բայց ինձ չի գցում,  
Քո փորձը նորի ինձ ետ է հրում,  
Բայց չեմ ընկնում:  
Չսուկ նորի մեջ՝ հույսիդ ալիքի,  
Եոր կյանք եմ տեսնում,  
Բայց տես կյանքիս նոր ու նորի մեջ,  
Չիմ մարդ է ապրում:  
Եւ շտապեցի՝  
Վեցի տոա, գնացի-եկա ու ստեղծեցի,  
Վարկրիս պահին մի քիչ գղջում եմ,  
Որ շտապեցի:  
Վու նոր ես տալիս ու նոր ես առնում,  
Եոր ես ստեղծում ըստ քո ճաշակի,  
Եւ չսկիւ կ'ս եմ,  
Բայց ուշացրեցիր:  
Եւ շտապեցի այունէր կանգնեցնել,  
Մասուցիւ անդորրն ինքնիշխանության,  
Եւ տապանքիս մեջ մոռացա դուռն քարով չշարել,  
Եսկ դու ուշացար  
Քանի դեռ պատ չէր այդ դռան տեղում,



Շեմից ներս մտնել:

Հիմա պատերս ճնշում են սիրտս,  
Իսկ քեզ ոչ մի կերպ ճնշել չի լինում,  
Դու ցանկանում ես ամեն բան ավել,  
Սկսել նորից,

Ինձ հետ սկսել,  
Բայց եթե անկեղծ՝

Քիչ ուշացել ես:

Դեռ ժամանակ կա մի պահ խորհելու,

Բայց շտապում եմ հիշեցնել նորից,

Որ ուշացել ես:

Լռություն, անդորր ու ոչ մի նշույլ քո կենդանության,

Ուշացար նորից,

Նորից ուշացար ճիշտ ժամանակին:



## Երբ դու ես ներկա

Երբ կյանքում ոչինչ ցավոտ չի թվում,  
Երբ էլ չի ցավում,  
Երբ ջալալի չէ՝  
Քո ուժն է ներկա...  
Երբ կյանքում ոչինչ ահ չի ներշնչում,  
Երբ չեմ վախենում,  
Սարսափելի չէ՝  
Քո շունչն է ներկա:  
Երբ չի կրճատվում ոչ հոգիս կյանքում,  
Ոչ տևողությունն ապրող կյանքերիս,  
Երբ չի կարճանում,  
Չեմ բացակայում՝  
Քեզնով եմ ներկա:  
Երբ կյանքում ցավ կա,  
Եսայի չի ցավեցնում,  
Երբ կյանքում մահ կա,  
Եսայի չի մեռցնում,  
Միլ դու ես ներկա:  
Մապրոյնները մենակ չեն թողնում,  
Եսայսկաները չեն էլ նկատվում՝  
Երբ դու ես ներկա:

## Երբեմն

«Երբեմն» բառը սիրում եմ գիտե՞ս,  
Ասում ենք «երբեմն»,  
Որ չհավատանք թե այն հաճախ է,  
Սակայն երբեմն լինող բաները չեն էլ նկատվում...  
«Երբեմն» բառով մենք պաշտպանվում ենք,  
Որ չասենք «հաճախ»,  
«Երբեմն» բառով մեզ հուսադրում ենք  
Ու արդարացնում,  
«Երբեմն» բառը թեթևացնում է ավելի հաճախ,  
Երբեմն թվում է,  
Սակայն թվացող առարկան չկա,  
Երբեմն էլ չի թվում՝  
Իսկապես երբեմն:  
Երբեմն սիրում եմ,  
Կասեք հաճա՞խ է այդպես պատահում,  
Դե իհարկե ո՛չ,  
«Երբեմն» բառով երբե՛ք չեն սիրում...  
Երբեմն դաժան եմ  
Ու այնքան դաժան,  
Որ մանկան լացը ներվս է շարժում՝ խղճիս փոխարեն,  
Երբեմն խեղճ եմ  
Ու խեղճ եմ այնքան,  
Որ կծկվում եմ ինքս իմ առաջ:  
«Երբեմն» բառը դառնում է «հաճախ»  
Ու մեզ վախեցնում,  
Քանի որ գիտենք  
Երբեմն այս նույն նշաններով են մեզ ախտորոշում...

# Երևի

Երևի նստել տանդ հատակին,  
Մեթարթ նայում ես հին առաստաղին,  
Դուրսից խոսում են,  
Դուցե մեղադրում,  
Իսկ դու գրիչը ձեռքիդ մեջ առած,  
Ուզում ես գրել բոլոր բառերը կիսատ մնացած,  
Միտն րդաջվել են սրտիդ հնամաշ  
Ու չեն ներծծվում:  
Երևի անշարժ պառկել հատակին,  
Չուսկ կարոտում ես,  
Երևի լարձը աչքերիդ սեղմած,  
Երան ես ուզում:  
Երևի նստել տանդ հատակին,  
Դու ունենում ես դռան ճռռոցին,  
Երևի մտնողին՝  
Երան սպասում:  
Երևի արդեն քնել ես ուզում,  
Մը օրը փոխվի,  
Դուրս Երևի քնել չես ուզում,  
Մը ամեն օրը,  
Մենեկ նոր օրը, Նրան չթողնեն քո անցյալներում:  
Երևի նստել տանդ հատակին,  
Դու մերն ես հաշվում,  
Դու յերան ձանձրալի,  
Դու յերան անխոստում,

Ու երևի թե հե՛նց նրա նման,  
Նույնքան անկոտրում:  
Երևի նստել տանդ հատակին,  
Արհամարհում ես ներս եկողներին՝  
Նրան ես ուզում:



## Թեմա չկա

'Ու լռում ես,  
Քանզի չունես թեմա ինձ հետ խոսելու,  
Իսկ ես լռում եմ՝  
Զվիտեմ, որք թողնեմ,  
Ու որից սկսեմ:  
Ո՞վ եմ ես եղել,  
Թեմա, թեմայից դուրս,  
Թե՞ թեմաներն առաջարկողը,  
Իսկ ո՞վ եմ հիմա,  
Ո՞ր գուցե կասես ամփոփված թեմա,  
'Դամ էլ վերջաբան,  
Բայց էլի լուռ ես,  
Ու լուռ եմ և ես,  
Պիտի հեռանանք,  
Թե դու և թե ես,  
Վիշտ է կենամ ես առանց թեմա,  
Բայց փոխարենը կնվիրեմ քեզ հպարտանալու,  
Խոսելու թեմա,  
Որ ես եղել եմ միակդ կյանքում...  
Ենչ անսրդար է կյանքում բաժանվել,  
Մտանց պատճառի,  
Մտանց հիմքերի  
Ու առանց թեմա:

## Ինչ լավ է, որ կաս

Ինչ լավ է, որ կաս այս մոլորակում,  
Թեկուզ հեռու ես,  
Թեկուզ իմը չես,  
Բայց բարի օրս դու ես ստեղծում՝ քո իսկ գոյությամբ:  
Ինչ լավ է, որ կաս,  
Մինչ քեզ չգիտեի իմ հոգու տեղը,  
Չգիտեի անգամ քանի գրամ էր  
Ու ինչ գույն ուներ,  
Աչքերիդ նայելով միայն հասկացա,  
Որ դու իմ ներքին նկարագիրն ես.  
Ոչ թե իմ հոգին քեզ է շատ նման,  
Կամ դու իմ հոգուն՝  
Հե՛նց դու իմ հոգու իրական դեմքն ես:  
Իմ մարմնի մեջ՝ ինչպես ամենքի,  
Նյարդերը շատ են, անգամ գույգ ու կենտ,  
Բայց իմ մարմնում թափառող նյարդն ես,  
Որ ամեն տեղ ես,  
Ողջ ներաշխարհս իրար ես խառնում,  
Բայց քեզ շոշափել չեմ կարողանում,  
Ողջ ներաշխարհս իրար ես խառնում,  
Բայց հոգիս էդպես թեթևանում է,  
Այնպես որ, հոգի՛ս,  
Իմ ներաշխարհը քեզնով է ապրում՝  
Ինչ լավ է, որ կաս:

# Իսկ ինչու հենց դու

Իսկ ինչո՞ւ հենց դու,  
Այլ ոչ թե ինքը,  
Ա՛յն Լ.Ր իմ սիրո այն մեծ գաղտնիքը,  
Ար գիտեիր հենց դո՛ւ,  
Այլ ոչ թե ինքը:

Ի՞նչ, որ անհատ ես,  
Մի սլարգ եություն,  
Մսկայն այնքա՛ն եմ քեզանով ապրում,  
Ար դու դարձել ես բնավորություն,  
Մկրան վաղուց եմ քեզանով ապրում  
Ար դու դարձել ես մի մեծ պատմություն,  
Ան որբուն շատ եմ քեզանով ապրում,  
Մկրան դառնում ես լուրջ հիվանդություն:

Իսկ ինչո՞ւ հենց դու՝  
Ի՞նչ այն Լ.Րագն ես իմ գիշերների,  
Ար ամբողջ օրը մեկնաբանում եմ,  
Ան պատասխանն ես այն աղոթքների,  
Ար Մի ամբողջ կյանք լուռ աղոթել եմ...



## Կրակ

Այնքան նման ես դու տաք կրակի,  
Որ ճթճթալով անվերջ վառվում է,  
Ու բոցկլտում է հենց այն ժամանակ,  
Երբ ինչ որ գաղտնիք իր մեջ թաղում է:  
Բայց սիրում եմ քեզ,  
Դու տաքացնում ես, այլ ոչ թե այրում,  
Դու լույս ես դառնում վայրի խավարում,  
Պոռթկում ես վստահ,  
Պոռթկում ես համառ,  
Ու խաղաղվում ես միայն իմ գրկում,  
Միայն ինձ համար:  
Տաք ես արյան պես,  
Քեզ հետ խաղ անել երբեք չի լինի,  
Քեզ շատ մոտ նստել անգամ չի լինի՝  
Դու, խելառ հոգի:  
Որքա՛ն գաղտնիք եմ ես քեզ վստահել,  
Որի պատճառով հրդեհ ես դարձել,  
Մոխրացրել ես իմ բոլոր հուշերը,  
Որոնք երբևէ ինձ ցավ են տվել:  
Բայց ես քեզ այնքան լավ եմ ճանաչել,  
Յուրի փոխարեն միշտ սառը ջուր եմ ձեքերիդ լցրել,  
Որ դու մեղմանաս,  
Բայց ո՛չ, չմարես,  
Դու, անմար հոգի,  
Այս ի՞նչ կրակ ես...

## Հակասություն

Մտում ես, որ ես,  
Բո անթնության պատճառն եմ դարձել  
Ու գրկել եմ քեզ երազ տեսնելու քո իրավունքից,  
Մտում ես, որ ես,  
Ի քանդանն եմ քո հատորների,  
Ու կանգառը իմ տեղին չի եղել,  
Մտում ես, որ քո վերնագրերի տակ սև գիծ եմ քաշել՝  
Եայց սողադարձի քո իրավունքը քեզնից չեմ առել:  
Մտում ես, որ ես,  
Շրահանելովն եմ քո պատերազմի,  
Ու կարգադրողը քո ստրկության,  
Որ իմ աչքերը քո տան պատերի նախշերն են դարձել,  
Ես իմ անունը՝ բաժակիդ մուսան:  
Մտում ես, որ ես,  
Մետաբոլիզմության վտառն եմ դարձել,  
Եվ տաբոլիզմության շեշտը հոգուդ մեջ,  
Որ համ զգալուդ ազդակն եմ դարձել,  
Մամուստության կայծն արյանդ մեջ:  
Մտում ես, որ ես,  
Բո հիշողության լծակն եմ դարձել,  
Ու մի՛ կրկնիր,  
Որ վերջին, միակ կանգառն եմ դարձել:

# Հայելիս

Հայելուս առաջ ժպտում եմ նորից,  
Ժպտում է և նա,  
Նույնքան գրավիչ,  
Մեկ ինձ ստում է,  
Մեկ անկեղծանում,  
Երբեմն անգամ տեսնել չեմ ուզում,  
Թե ոնց է դեմքս լուռ այլակերպում:

Հայելուս առաջ ժպտում եմ նորից,  
Իսկ նա հեզնում է, քմծիծաղ տալիս,  
Նույնքան համոզիչ,  
Մեկ ինձ հուշում է,  
Որ ես ջահել եմ,  
Մեկ էլ հիշեցնում,  
Որ դե՛ռ ջահել եմ:

Հայելուս առաջ ժպտում եմ նորից,  
Ժպտում է և նա,  
Նույնքան կախարդիչ՝  
Ուզում եմ գրկել,  
Այնպե՛ս համբուրել,  
Որ ինչ չքնաղ է ինձ նկարագրել,  
Մեկ էլ ուզում եմ կոտրել, փշրել,  
Որ էլ չտեսնեմ արտացոլանքս,  
Մի քիչ հնացած  
Ու անդառնալի,  
Լավ էլի՛ հայելի...

## Ճակատագիրդ անուն էլ ունի

Քայլդ գցեցիր ճիշտ ուղիներով  
Ու գոհ մնացիր ինքդ քո բախտից,  
Բախտիդ անիվը ե՛ս պտտեցի,  
Հիմա արի տե՛ս, որ բախտդ ես եմ:

Ոտքի կանգնեցիր հենց ի՛մ շնորհիվ,  
Բայց փառք ես տալիս քո ճակատագրին,  
Ճակատագիրդ անուն էլ ունի,  
Ում ազգանունով դեռ քեզ կկոչեն:

Ու սովորեցիր գոնե նմանվել՝  
Բնօրինակը կարծես թե ես եմ,  
Բայց փառք ես տալիս քո բաժին Աստծուն,  
Աստծուդ տվածը մի գուցե ե՛ս եմ:

Իսկ այսօր ունես թե Տեր, թե վկա,  
Բայց հավատում ես լոկ վկաներին,  
Քեզ վկայողը անուն էլ ունի,  
Ում ազգանունով դեռ քեզ կկոչեն:

## Մենախոսություն

Հաճախ սիրում եմ,  
Երբ հայելու առաջ սիրուն պարում եմ,  
Երբեմն էլ սիրում եմ,  
Երբ առանց հայելի ինքս եմ պարում,  
Հաճախ սիրում եմ,  
Երբ լավ արածս գնահատում եմ,  
Երբեմն էլ մի քիչ հպարտանում եմ,  
Երբ որ բարձր են այն գնահատում,  
Հաճախ սիրում եմ,  
Երբ հեկեկոցի ուժը լռում է, ու դառնում է քուն,  
Երբեմն էլ սիրում եմ,  
Երբ զուսպ շրթունքը պոռթկում է կամա,  
Բայց չի վարակում...  
Հաճախ նստում եմ լեցուն դահլիճում,  
Մենակությունից սիրտս է պայթում,  
Երբեմն էլ նստած իմ չորս պատի մեջ,  
Ես իմ աղմուկից ինքս եմ հոգնում:  
Հուզվում եմ հաճախ,  
Երբ մայրը որդու տաղանդն է գովում,  
Կամ քաջությունը հաղթած մարտերի,  
Բայց լաց չեմ լինում,  
Երբ մի ողջ խաղս տանուլ են տալիս:  
Հաճախ եմ հուզվում,  
Բայց քիչ եմ լալիս:  
Հաճախ սիրում եմ,  
Երբ ճոխ բառեր են միմյանց ասում,  
Երբեմն էլ ժպտում եմ,

Երբ ճոխ բառերը ինձ են շոայլում,  
Հաճախ եմ ժպտում  
Ու քիչ եմ լալիս:  
Հաճախ մտքերս Սևակի կարած շորերն են հագնում,  
Միտքս՝ Շերամի,  
Երբեմն էլ իմ իսկ ձևած հագուստն է հոգիս զարդարում,  
Հաճախ եմ լռում...



# Մերժում

Ու մերժում է քեզ,  
Որ լինի տերը իր իսկ խոստումի  
Վաղուց խոստացված,  
Բայց խոստովանիր,  
Որ նախ և առաջ,  
Քո հպարտանքն է,  
Նրա վաղեմի խոստումը դրժած:  
Ու մերժում է քեզ,  
Որ չփլուզվեն երկու վեմերը իրարու հենված,  
Բայց մոռանում է,  
Եղածը վեմ է,  
Իսկ վեմի սիրտը վաղուց է մեռած:  
Ու մերժում է քեզ,  
Հավատարմության գավաթը կրած,  
Բայց ինքդ գիտես,  
Որ հավատարիմ հոգով են լինում ամենից առաջ:  
Ու մերժում է քեզ,  
Աչքերիդ փոխարեն երկինք նայելով,  
Բայց մոռանում է,  
Մերն ընծայել է ինքը՝  
Աստված:

## Նորից սիրում եմ

Ու սերն է նորից սիրտս պաշարել,  
Որը ծերացած ճրագի նման,  
Ծուխ է արձակում լույսի փոխարեն,  
Ինչպես անպսակ օրիորդ հիշաչար,  
Իր ոխն է հանում սրտիցս ահել:

Ու սերն է նորից սիրտս գրավել,  
Ինչպես խավարից լույս օր թափանցած անեզր հոգի,  
Խաղում է նորից հասուն հոգուս հետ,  
Ինչպես աղբյուրը արյան վարակի:

Ու սերն է նորից սիրտս նվաճել,  
Դարձել է մուսա բարիք ծնելու,  
Որպես երագիս խենթ կատարածու,  
Պարուրել է ինձ,  
Հերքել հասակս իմաստնանալու:

Ու սերն է նորից սիրտս հմայել,  
Որը մահացող կրակի նման,  
Ծուխ է արձակում լույսի փոխարեն,  
Ինչպես մի գալիք ճերմակած գլխիս,  
Ինչպես կապակցող մաս զարկերակի,  
Համակել է ինձ, ինչպես պատանու՝  
Հինս նորելու:



## Չեմ մեղադրում

Ու ոչ մերժում ես,  
Ոչ էլ ընդունում,  
Քննությունն անցնում  
Ու չեմ ընդունվում,  
Ու ծառից կախված խակ մրգի նման,  
Որ չի ընկնում ու չի էլ հասնում,  
Ես էլ հոգուդ մեջ ոչ խակ եմ այնքան,  
Բայց չեմ էլ հասնում,  
Մի քայլ է փում հասնում կարծես թե,  
Բայց արի ու տե՛ս,  
Չի հասունանում պահիր ինձ հասած:  
Ոչ ներս ես թողնում,  
Ո՛չ դուրս ես անում,  
Ու քո անկոտրում պատնիշի առաջ,  
Որ չեմ եմ կոչում,  
Մնում եմ կանգնած,  
Ոչ ետ եմ գնում և ոչ էլ առաջ:  
Ոչ ինձ հիշում ես,  
Ոչ էլ մոռանում,  
Հիշում ես հանկարծ,  
Երբ մոռացվել էիր,  
Ու մոռանում ես հիշվելուդ պահից մինչև մոռացում  
Քեզ չեմ մեղադրում,  
Որ սիրողական լողորդի նման,  
Ո՛չ արի եմ ելնում,  
Ո՛չ խորն եմ սուզվում,  
Քեզ չեմ մեղադրում,  
Որ ոչ հաղթում եմ,  
Ոչ էլ պարտվում...

## Չեմ սիրում

Էլ քեզ չեմ սիրում,  
Բայց թե քայլերդ ինձ մոտ կհոսեն,  
Թող ինքնահոսի,  
Վեր կաց ու արի,  
Քանի ունակ ես մահադարձ անել,  
Վեր կաց ու արի:  
Էլ քեզ չեմ սիրում,  
Բայց սիրել եմ չե՞՞,  
Հանուն այդ «չե» ի՞նչ  
Ոչ թե անցյալի,  
Վեր կաց ու արի:

Էլ քեզ չեմ սիրում,  
Բայց կուգես արի,  
Քանի ունակ ես հոգեդարձ անել,  
Վեր կաց ու արի՝  
Ես չեմ կարող գալ,  
Կիսատ թողածդ շնչում է, ահա՛  
Ոգեշնչում է, էլի ու էլի,  
Հանուն այդքան շատ «էլի», «էլ»երի՝  
Ոչ թե անցյալի,  
Վեր կաց ու արի:

Էլ քեզ չեմ սիրում...

## Չես փոխարինվում

Միշտ էլ հին բանը նորով են փոխում,  
Ընտելանում են նորին նորովի,  
Նորին մեծություն այդ նորությանը,  
Վերաբերվում են ըստ իր արժեքի:  
Ուրվագիծը քո շատ է հնացել,  
Ու հին ես այնքան,  
Որ անտիկների դասին եմ կարգել,  
Բայց էլի նույնն ես՝  
Չես փոխարինվում:  
Շատ նորեր եկան,  
Բայց հնություն<sup>ը</sup>ն եմ մի գուցե սիրում,  
Հնության մե<sup>ը</sup> է գուցե արժեքդ,  
Որ չես փոփոխվում...  
Նորի մեջ կիրք կա,  
Բայց սերն է պակաս,  
Նորը գին ունի՝  
Արժեքն է պակաս,  
Նորը հաճույք է,  
Բայց ի<sup>նչ</sup>ն է պակաս,  
Որ հնությանն եմ հարատև կառչում:  
Փորձում եմ փոխել ու փոխվել ինքս,  
Ինձ ազատելով քո հնությունից,  
Բայց հե՛նց այդ պահից,  
Սկսվում են իմ փնտրտուքները,  
Ինչ որ մի բանի,  
Գուցե և «ես»իս:  
Սև հաց խանձահամ,  
Կես բաժակ գոլ ջուր,  
Չէ՛, չի հազեցնում,

Կարոտ չե՛մ առնում,  
Բույրդ չե՛մ առնում,  
Քունս չե՛մ առնում,  
Իմ հինն եմ ուզում՝ ես քեզ եմ ուզում...  
Միշտ էլ հին բանը նորով են փոխում,  
Բայց ամեն մի նոր առնում են հնից,  
Առնում են հինը, հալեցնում տաքով,  
Նորն են կառուցում,  
Բայց քո հալոցքին ես չեմ դիմանում,  
Հալվում եմ քեզ հետ, մեկ բուռ եմ դառնում,  
Քո այդ հալոցքից նոր կյանք է կաթում՝  
Քո դերն իմ կյանքում նոր դեր է խաղում,  
Նոր կյանք է առնում,  
Հին-նոր է դառնում,  
Չես փոխարինվում:



## Մեր ու Խիղճ

Մեկին սիրում ես,  
Մյուսին՝ խղճում,  
Մերը Աստծուց է,  
Խիղճը՝ Աստված:  
Մեկը ապրում է,  
Մյուսն՝ ապրեցնում,  
Մեկը խնդիր է,  
Մյուսն՝ առեխծված:  
Մերը քո կյանքում միշտ ենթակա է,  
Խիղճը՝ ենթարկված,  
Մերը կերպար է,  
Խիղճն՝ ապրելակերպ,  
Մերը խոնարհ է,  
Խիղճը՝ խոնարհված:  
Մեկին սիրում ես,  
Մյուսին՝ խղճում,  
Սիրում ես, քանզի նա գոյական է,  
Խղճում ես, ինչես գոյականակերտ անգործ վերջածանց,  
Մեկը թեմա է,  
Մյուսը՝ խոսվածք,  
Մեկը մի թել է,  
Մյուսը՝ հյուսվածք,  
Մեկին սիրում ես հասուն կնոջ պես,  
Մյուսին, կարծես լոկ սիրահարված:

Միրով շարում ես,  
Խղճից ես շարված,  
Միրով մերում ես,  
Խղճով ես մերված,  
Միրով ծնել ես,  
Խղճից ես ծնված,  
Մեկին սիրում ես,  
Մյուսին՝ խղճում,  
Մերը սրտից է,  
Խիղճը՝ սիրելուց,  
Մերը Աստծուց է,  
Խիղճը՝ Աստված:



## Քեզ

Առնել թախիծը հոգնած աչքերիդ,  
Պատճառը դառնալ նրանց փայլելու,  
Կրակը դառնալ արյանդ միջի,  
Լուսաբացներիդ նորից սիրելու:  
Դիպչել շուրթերով դեմքիդ ծալքերին,  
Հեզիկ համբույրով հետքերը հարթել,  
Իմաստը դառնալ նորից ծնվելուդ:  
Գովել արածդ,  
Չարածդ գովել,  
Գովել այն թերին,  
Ինչը չեն գովել,  
Նստել մինչև լույս, ձեռքերդ բռնած,  
Լսել հաճույքով ապրածիդ մասին,  
Քայլել ձեռք-ձեռքի անցյալիդ միջով,  
Իմաստը դառնալ սիրտ նորոգելու:  
Քուն մտնել քեզ հետ,  
Վերջին կանգառը դառնալ երազիդ,  
Ու անձրևաբույր գեփյուռը դառնալ,  
Արշալույսիդ մեջ հանգիստ քնելու:  
Հենվել քո կրծքին,  
Միրել անձնուրաց,  
Միրել այն թերին,  
Ինչը չեն սիրել,  
Լաց լինել քեզ հետ՝  
Վերածվել քեզ հետ լալազին թացի,  
Ծիծաղել քեզ հետ՝  
Արցունքը դառնալ ծիծաղիդ միջից նորից հոսելու:

Մեղքի փեշերը բաց թողնել քեզ հետ,  
Ժխտել օրենքը հակասիրելու,  
Համաժամանակ սրտի զարկ դառնալ,  
Արյանդ միջով շրջանառելու:  
Հականեխիչք դառնալ խռովքիդ,  
Հակապատկերը քո ատելության,  
Հերքել միջանցիկ հոգեղեններին,  
Ուղափառ սիրով քեզ հետ խաչվելու:





# Քեզ ի՞նչ անուն տամ

Հիմա նստած եմ ու միտք եմ անում,  
Քեզ ի՞նչ անուն տամ,  
Քեզ ինչպե՞ս դիմեմ,  
Թե լինեիր հեքիաթ, ես քեզ կանվանեի իմ բարի կանարդ,  
Թե լինեիր երազ՝ լուսավոր տեսիլք,  
Թե լինեիր անցյալ, կասեի ավստոսանք,  
Բայց իմ ներկան ես ու եղի՛ր գալիք:  
Դու չես գիտակցում,  
Թե դու ինչ դարձար իմ կյանքի համար՝  
Սրտիս բաբախը այժմ դարձել է մի մեղմ կտկտոց,  
Կրակե ալիքն իմ արյան միջի,  
Հիմա դարձել է մի հանդարտ խշշոց,  
Այն սև գազանը իմ հոգու միջի,  
Հիմա դարձել է...չէ, բան չի դարձել, անհետացել է,  
Հենց քո շնորհիվ:  
Հիմա բառերս այնքան աղքատ են, որ քեզ անուն տան,  
Դու ո՛չ իմ սերն ես, ո՛չ էլ ընկերս,  
Ոչ իմ ծնողն ես և ոչ էլ սուրբս,  
Դու այս ամենի միախառնումն ես:  
Ես քեզ կանվանեմ հոգեկան վիճակ  
Կամ էլ գուշակի բարի գուշակում,  
Շնորհակալ եմ, որ ինձ ապրեցրիր,  
Չէ՞ որ ես այնքան դժվար եմ ապրում:

## Ես ու դու

Ես հուժք եմ միայն՝  
Քանդակը դու ես,  
Քո՛ փռչիներն է դժվարը առնել,  
Ես լոկ ճակատ եմ,  
Մեռոնը դու ես,  
Ճակատագիրդ պետք չէ՛ հայհոյել:

Քեզ ծափ են տալիս,  
Ափերով այդ նույն՝ ինձ ապտակում են,  
Ու այդ ձեռքերը պետք չէ համբուրել,  
Մի կտոր փայտ եմ՝  
Խաչքարը դո՛ւ ես՝  
Քեզ են խոնարհվում,  
Ինձ պե՛տք չէ խանդել:

Անպտուղ ծառ եմ՝  
Պատվաստը դո՛ւ ես,  
Իմ տված բերքից չարժե խռովել,  
Ճերմակ մի թուղթ եմ՝  
Թանաքը դու ես,  
Դատարկ էջերից պետք չէ՛ դժգոհել:

Ու դու ընտրեցիր կարմիրը կյանքում՝  
կանգառը երկար,  
Մոդիկը տենդի,  
Արյուն լյարդացած,  
Կապույտն է իմը,

Էքրկինքը, օդը,  
Եվերջապես ջուրը՝  
Թեկուզ վարարած,  
Բայց արի ու տե՛ս,  
Ընր վերջ ի վերջո,  
Կապույտ շրթունքը երակ է մեռած,  
Իսկ քո կարմիրը՝  
Լուկ այտեր շիկնած:

Լուսնոսկու նման, այո՛, փափուկ եմ,  
Հունցող մատները քեզ են պատկանում,  
Պե՛տք չէ խռովել,  
Չարժե փնթփնթալ,  
Թե քեզ չեմ սագում:

## Դու իմ... Ծաղիկս

Ժպտա ինձ նորից  
Ժպտա ինձ նորից,  
Ժպտա ինձ այնպես,  
Ասես երբևէ քեզ չեմ վշտացրել,  
Ասես երբևէ քեզ չեմ նեղացրել իմ բարկությունից:  
Նայիր ինձ նորից քո լայն բերրով,  
նայիր ինձ այնպես,  
Կարծես երբևէ քեզ չեմ լացացրել,  
Կարծես սև ներկը չի կաթել ծոցդ,  
Հոնքերիդ հասնող թերթերունքներիդ ծանր թերթումից:

Գրկիր ինձ նորից,  
Գրկիր Ծաղիկս,  
Գրկիր ինձ այնպես,  
Ասես երբևէ քեզ ետ չեմ հրել,  
Միրտդ չեմ կոտրել իմ այդ հրումից,  
Գրկիր ինձ այնպես,  
Ասես պահել եմ ողջ խոստումներս,  
Ինչի համար էլ չես ուզում իջնել իմ նվաստ գրկից:

Ներիր ինձ նորից,  
Ներիր կիսասիրտ տեսակիս համար,  
Գրկիր ներումով՝  
Ինչպես գրկում են հեռացողներին,  
Ներիր գրկումով,  
Այդպես դադում են ինձ նմաններին՝

Ինձ նման խելոք խելագարներին,  
Դու իմ...  
Ծաղիկս:

## Եկար դու վերջում

Եկար դու վերջում,  
Քո տեղը գտար ամենավերջում,  
Չկասցրեցիր իմանալ անգամ,  
Որ վերջինն էիր դու:  
Ամենավերջինն այն սրտխփոցի,  
Որն ապրեցնում է,  
Որ շունչ է կտրում,  
Բայց լիացնում է ինքնաձին օդով,  
Ամենավերջինն, ով ի գորու էր միտքս մթագնել  
այն շատ ուզելուց,  
Որ մանուկներն են լոկ էդպես ուզում,  
Ամենավերջինը, ով սիրտս լցրեց,  
Բայց չլացացրեց,  
Ով գրավեց ինձ առանց պատերազմ՝ ինքնաշեն գենքով:  
Ու վերջինն էիր դու,  
Ամենավերջինն իմ երագների ու իմ երագած,  
Ու վերջինն էիր դու,  
Ով ստիպեց ինձ մոռանալ, ժխտել, հերքել, չհիշել,  
Որ կյանքում ցավ կա,  
Որ կյանքում մահ կա՝ գրողը տանի՝...  
Ու վերջինն էիր դու,  
Ում հետ չունեցա ժամ տրտնջալու,  
Ժամանակ չկար հուսահատվելու:  
Ու վերջինն էիր դու,  
Ու վերջ ի վերջո ի՛մ վերջինն էիր դու,  
Ամենավերջինն ու...  
Վերջ:

Լուսինյան աղմուկ

---

Մեկ օր էլ անցավ մեր մասնակցությամբ հյուրախաղերից,  
Գիշեր է նորից,  
Պաղ է, խաղաղ է,  
Ու նոր է նորից,  
Մեկը մրսում է եկող նոր սառը խաղաղությունից,  
Մեկն էլ զովանում ու ազատվում է հնության հոտից,  
Գիշեր է նորից:

# Նոյեմբերուհիս

Աշնան արևը գլորվում է ցած,  
Բայց դեռ ճտերին ոչ ոք չի հաշվել,  
Մի քանի տերև գահրնկեց չեղան,  
Որ հույս ներշնչեն, թե աշուն է դեռ:

Մնահավատի ու գուշակի պես,  
Փորձում եմ աշնան այն օրը տեսնել,  
Որտեղ ճտերը այդ օրն են հաշվում ,  
Ու թագադրում են «Նոյեմբերուհուն»:

Անձրևն ու թեյը իրար խառնելով,  
Աշնան հեքիաթի նոր բույր եմ հյուսել,  
Թուղթն ու թանաքը ձեռքիս մեջ առած,  
Հեքիաթասացի դեր եմ ստանձնել.  
Ցավում է թուղթը գրչիս հպումից,  
Նոր ցավ է ծնվում,  
Տողատակում է սփռվանքը լոկ,  
Որ աշնան սերը գարնանն են ցանում,  
Տողատակերում փարատում կա ողջ,  
Որ դեռ աշուն է՝ անձրևը վկա՝,  
Դեռ ժամանակ կա նրան գովելու,  
Այն էլ նոր տողից,  
Ու մի մատ խորքից,  
Դեռ ժամանակ կա,  
Մի մատ խորությունն այնպես հաշվելու,  
Որ չվերածվի չորս մատ խորության,  
Ու սիրտդ ծակի,



Դեռ ժամանակ կա՝ այս ցուրտը վկա,  
Դեռ հույս կա առկա,  
Որ եկող ցուրտը դեռ կկոտորվի,  
Ու թե կոտորվի,  
Կոտորվողը լոկ թող ցուրտը լինի...

Աշնան արևը մոլորվել է, կա՛ց,  
Բայց դեռ ճտերին ոչ ոք չի հաշվել,  
Ձյունը հալվում է, ձնանում անձրև,  
Որ հույս ներշնչի, թե աշուն է դեռ:

Իսկ ես սիրառատ աշուղի նման,  
Գովում եմ գարնան այն օրը վսեմ,  
Երբ որ ցանեցին սերմերը քողի,  
Որ նոյեմբերը այդ քողով զուգեն՝  
Նոյեմբերուհուս պսակը վկա,  
Դեռ ժամանակ կա...

## Դեռ կգա մեկ օր

Դեռ կգա մեկ օր,  
Որ գլխապտույտ կսկսվի քեզ մոտ,  
Բնավ ոչ շատից  
Կամ հոտ ու տոթից:

Դեռ կգա մեկ օր,  
Որ լռությունը ճիչդ կկանխի,  
Բնավ ոչ վախից  
Կամ չարությունից:

Դեռ կգա մեկ օր,  
Որ կհավատաս աչքիդ տեսածին,  
Բայց ոչ ցնորքից,  
Կամ ցանկությունից:

Դեռ կգա մեկ օր,  
Որ տանդ դուռը կամաց կբացվի,  
Բնավ ոչ քամուց  
Կամ անց ու դարձից:

Դեռ կգա մեկ օր,  
Որ դուրս արածդ, ետ տուն կլցվի,  
Բայց ոչ ավելով  
Կամ փոթորիկից:

Դեռ կգա մեկ օր,  
Որ վերին շուրթդ կապը կկտրի վարի շրթունքից՝  
Մատի հպումից:

Դեռ կգա մեկ օր,  
Քիչ էլ սպասիր,  
Անպայման կգա...

## Եթե ուժերս հավաքեմ մեկ օր

Եթե ուժերս ժողովեմ մեկ օր,  
Պիտի պահանջեմ,  
Այլ ոչ թե խնդրեմ,  
Պետք է կարգադրեմ,  
Այլ ոչ համոզեմ՝  
Ես պիտի գոռամ. «Կանգ առ մոլորակ»,  
Քո այս պտույտից սիրտս խառնում է:  
Կանգ առ անջատվեմ,  
Այս միացումը հոգիս հանում է:  
Եթե ուժերս հավաքեմ մեկ օր,  
Ես պիտի գոռամ,  
Որ իր պտույտով,  
Գլխապտույտներ ինձ չառաջացնի,  
Գլխացավերս գլխացավանքի, որ չվերածի  
Այս խաղալիքը,  
Իր այս պտույտով թվացյալ դանդաղ,  
Կյանքիս էջերում, էլ չավելացնի և ոչ մի դագաղ,  
Իր աղմուկի մեջ այս միապաղաղ,  
Հանկարծ չլսեմ գունդան հարսպարի,  
Ոչ էլ դուդուկը մոր դառը լացի:  
Եթե ուժերս հավաքեմ մեկ օր-  
Պետք է ստիպեմ,  
Որ ոչ իմ կյանքին շաքար հավելի,  
Ոչ էլ կում առ կում  
Կամ շերեփ-շերեփ աղ ավելացնի:  
Եթե ուժերս հավաքեմ մեկ օր,  
Թե կարողանամ այդչափ ուժ գտել:

## Էլ չգնաք

Գնացիք մեկ-մեկ,  
Գնացիք քիչ-քիչ,  
Գնացիք հանկարծ՝  
Կամ պարտադրված  
Կամ հիասթափված,  
Մեկդ լքեցիք,  
Մյուսիդ տարան.  
Մյուսիդ տարան, որ կտրեն ինձնից,  
Մեկն էլ իր կամքով վեր կացավ գնաց,  
Հերթով գնացիք,  
Հիմա ի՞նչ անեմ:  
Ով լքեց կասեմ՝ Աստված քեզ հետ,  
Ում Տերը տարավ՝  
Ողորմի հոգուն,  
Ում տարան ինձնից՝  
Բարով վայելեն,  
Էլ ես ի՞նչ ասեմ:

Ոչ իմ արցունքը,  
Ոչ կանչն ու երգը տխուր ետկանչի,  
Նրանց սրտերին էլ բան չի հուշի,-  
Շինեմ գնացքներ օվկիանոսային,  
Թռչող խսիրների ամպերը ճեղքող,  
Էլ չի փրկելու,  
Էլ ես ի՞նչ անեմ:  
Գնացողներին՝ բարի ճանապարհ՝  
Ու էլ ո՞վ մնաց,  
Ու ով էլ մնաց՝  
Չգնա ք մեկ-մեկ,

Չգնա՛ք քիչ-քիչ,  
Ամուր բռներ ինձ,  
Բռներ ձեռքերս, փեշս, ոտքերս՝  
Օձիքս նույնիսկ,  
Որ էլ չգնաք,  
Որ էլ չտանեն,  
Բա էլ ի՞նչ ասեմ:  
Գնացողի հետ սիրտս էլ գնաց,  
Մնացողի հետ ահն է պարուրում՝  
Հանկարծ չգնա,  
Չտանեն նորից,  
Մնացեք էլի,  
Ի՞նչ կա օտար տեղ, ինձանից հեռու,  
Այդ հեռացումը՝ մեզանից հեռու,  
Բա էլ ի՞նչ ասեմ:

# Գիտեմ

Հենվում եմ խոսքիդ,  
Կարծիքդ գրկում,  
Հոգնում ես գիտեմ,  
Բայց նաև գիտեմ, թե որքան լուռ եմ,  
Երբ էլ չեմ սիրում,  
Ու փոխարենը խանդեմ ամենքին,  
Ձեր տան շունն անգամ իմ հոգուն մոտ է,  
Որն իր պոչիկով քո տիկիներին գալն է ողջունում,  
Իսկ ես լուկ գիտեմ նրա անունը,  
Բայց նաև գիտեմ ինչպես եմ խորշում կենդանու մազից,  
Երբ էլ չեմ սիրում նրա տիրոջը:  
Ու պահանջում եմ ավելցուկ սերդ,  
Որ ետ են հրում,  
Սակայն իմ ներսի նոր կյանքածինն է,  
Ինչպես սնունդը քայքայման փուլում:  
Ժլատ ես գիտեմ,  
Բայց նաև գիտեմ,  
Թե որքան զուսպ եմ ուզելու հարցում,  
Երբ էլ չեմ սիրում:  
Ու երագում եմ մաացած կյանքդ,  
Որի ճամփեքը մենակ ես անցնում,  
Չես տալիս ձեռքդ,  
Գոռոզ ես գիտեմ,  
Բայց նաև գիտեմ,  
Որ ողջունելիս կանայք ձեռնոցը ձեռքից չեն հանում,  
Երբ էլ չեմ սիրում:  
Ու փոխարենը հեռանամ քեզնից,  
Ծնկներդ գրկած այգն եմ ողջունում,

Ինչ որ դու ունես՝  
 Գիտեմ սիրելիս,  
 Ինձ չեն պատկանում,  
 Անգամ ծնկներդ,  
 Որոնք իմ մահով նույնիսկ չեն ծալվում,  
 Բայց նաև գիտեմ ետ դարձիս տեղը,  
 Երբ էլ չեմ սիրում...  
 Երանի տեսների ես այն կնոջը,  
 Ով քեզ չի սիրում,  
 Ով դեն է նետում եփածդ սուրճը,  
 Ու չի կարոտում բույրը օձիքիդ,  
 Երանի տեսների քո երագածին,  
 Ով չի երագում կրել իր ներսում երկրորդ քեզ պեսին,  
 Ով հեռանում է առաջին վեճից,  
 Ու քեզ չի դառնում:  
 Երանի տեսների ես այդ կնոջը,  
 Նույն այն հայելուս մեջ,  
 Որի ավերին սավան ես գցում-  
 Չես սիրում գիտեմ,  
 Բայց նաև գիտեմ ոնց են կարոտում հեռացող կեսին,  
 Ոնց են հետևում քիչ-քիչ փոքրացող ոտնահետքերին,  
 Ու նաև գիտեմ,  
 Որ փոքր քայլերն ավարտված ես-ի,  
 Տեղում կանգնածի աչքերի առաջ,  
 Նորածին մանկան ոտնաթաթի պես փոքր են թվում,  
 Իսկ ի՞նչ իմանաս,  
 Գուցե չե՞ն թվում,  
 Գուցե չճնված որդիներին էլ իր հետ է տանում անտեսված կինը,  
 Որի հայելուն պատան են կախում...  
 Բայց նաև գիտեմ,  
 Որ նման կանայք նովել են դառնում,  
 Երբ էլ չեմ սիրում:



## Ինչո՞ւ չլինել

Ինչո՞ւ չլինել այն մեծը կյանքում,  
Ում նմանվում են,  
Այն ծառը կյանքում,  
Որից քաղում են,  
Այն սիրող սիրտը,  
Որ կարոտում են,  
Քաղցր գրկումը, որպես սրտակից:

Ինչո՞ւ չլինել այն մեծը կյանքում,  
Ում վստահում են,  
Այն հենքը կյանքում,  
Որին հենվում են,  
Այն տվող ձեռքը,  
Ումից խնդրում են,  
Ու ձեռքսեղմումը, որպես աջակից:

Ինչո՞ւ չլինել այն մեծը կյանքում,  
Ում հավատում են,  
Այն դուռը կյանքում,  
Որը թակում են,  
Ու ունկնդիրը,  
Առանց դատելու, որպես բախտակից:

Ինչո՞ւ չլինել այդ մեծը կյանքում՝  
Անկախ տարիքից:

## Լռության աղմուկ:

Անցել են այսքա՛ն տարիներ երկար,  
Իսկ դու քո մասին լուր չտվեցիր,  
Լռում ես համառ,  
Չգիտեմ անգամ թե ինչու համար:  
Երբ դու խոսում էիր,  
Այնքան հարուստ էր բառապաշարդ,  
Այնքան սրտանց էիր խոսքդ կատարում,  
Որ լոկ քո ձայնով աղմուկ էիր անում,  
Իսկ երբ լռեցիր,  
Բաղաձայնները խոսել փորձեցին  
Ու ստեղծեցին լռության աղմուկ:

Քո լռությունից, ես էլ եմ լռել,  
Ամուր փակվել եմ իմ չորս պատերում  
Ու մինչ կխոսես՝  
Միբոս ե պայթում,  
Շունչս է սուլում  
Ու ստեղծում էր լռության աղմուկ:

Քո լռությունից անդորր չի տիրում՝,  
Ինչպես տիրում էր լռության պահին,  
Քո լռությունը աղմուկ է դառնում,  
Հիմա աղմկիր,  
Այդպես է միայն լռություն տիրում,  
Լռության աղմուկն անտանելի է,  
Հոգի է հանում:

# Մենապար

Իմ մենապարի արձագանքները,  
Այսօր դարձել են բանաստեղծություն,  
Այն, որ պարել եմ հաճախ մեն-մենակ,  
Նույնիսկ աննվազ:  
Ճիշտ է, չեմ տեսել ինչպես եմ պարում,  
Բայց ուժգին կամ թույլ ոտնաձայներս,  
Հուշել են կամա,  
Թե ինչ եմ պարում:  
Որպես դիտողի՝ աչքեր են շոյել,  
Իսկ որպես պարող՝  
Աչք եմ կկոցել,  
Իմ իսկ ստեղծած համարի վրա:  
Ստվերիս միջով տեսել եմ այլ բան,  
Իսկ հայելուս մեջ զգացել եմ այն  
Ու կարդացել եմ որպես պատմություն:  
Շողքը կոցկել է զգացականս,  
Հայելիս կերտել երկու նույնություն,  
Կարդացել եմ այն,  
Նաև հասկացել,  
Որ նման պարեր մենակ չեն պարում:  
Փոխել եմ հաճախ հնչող մեղեդին,  
Կամ շարժումիս եմ նոր զարկ հաղորդել,  
Փոխել եմ հաճախ պարելուս ձևը,  
Կամ աչքերիս եմ ժպիտ հաղորդել,  
Սակայն ստվերս միշտ հաղորդել է  
Ու անգամ մատնել,  
Որ ողջ պարերը, այդ ես եմ պարել:

Շողքն ընկալել է, նաև կրկնել,  
Հայելին գուցե նմանակել է,  
Այսպես իմ պարին տրվել է երկու վերնագիր տարբեր,  
Ամեն ունկնդիր նոր անուն տվեց  
Ու համեմատեց իր պարածի հետ,  
Գուցե հավանեց,  
Գուցե ըստ իրեն շարժում հավելեց,  
Բայց ծափահարեց,  
Քանի որ դիտեց իմ այդ պարի մեջ հասուն ժառանգ:  
Այնքա՛ն եմ սիրում ես մենապարել,  
Թեկուզ առանց տաղ:

# Մի լռիր

Խնդրում եմ խոսիր,  
Քո լռությունը ինձ սպանում է,  
Այնքան նման է աշխարհի վերջին,  
Այնքան նման է մոտավորտ մահվան քո լռությունը,  
Այդպես մի՛ լռիր,  
Ես վախենում եմ,  
Գեթ մեկ բառ ասա,  
Թեկուզ անալի,  
Միայն մի լռիր:  
Ինչո՞ւ ես լռում,  
Չե՞ որ քո լեզուն այնքան քաղցր է,  
Որ սատանու սիրտ մեղմել էլ գիտի,  
Չե՞ որ քո ձայնը այնքան քաղցր է,  
Որ այն աշխարհից մարդ ետ կբերի,  
Ինչո՞ւ ես լռում...

Խնդրում եմ խոսիր,  
Քո լռությունը հիվանդացնող է,  
Այնքան նման է հոգեառ դևի,  
Այնքան նման է հավետ քնախտի քո լռությունը,  
Այդպես մի՛ լռիր,  
Ես սարսափում եմ,  
Գեթ մեկ բառ ասա,  
Թեկուզ ավելորդ,  
Թեկուզ ձանձրալի,  
Միայն մի լռիր:

Ինչո՞ւ ես լռում,  
Չե՞ որ քո լեզուն այնքան քաղցր է,  
Որ չարի հոգին անգամ կմեղմի,  
Չե՞ որ քո ձայնը այնքան քաղցր է,  
Ինչո՞ւ ես լռում...



# Ներիր, Տիրամայր

Ներիր, Տիրամայր,

Ներիր այսքան շատ ատելուս համար,

Ատում եմ սուտը,

Երբ երազածի բարձրաձայնումն է,

Երբ ոչ մի եղունգ գլուխ չի քորում՝

Միայն գովում է...

Ատելը մե՞ղք է,

Ուրե՛մն կասեմ՝

Չե՛մ սիրում կեղծը:

Ներիր, Տիրամայր,

Ներիր այսքան շատ ատելուս համար,

Ատում եմ հավատք բազմացնողներին,

Հավատքի ճամփան երկատողներին,

Երբ որ հավատք են ցողում մեր գլխին,

Արդյունքում մերը տանում են մեզնից:

Ներիր, Տիրամայր,

Ներիր այսքան շատ սատշելուս համար-

Ատում եմ նրանց, ովքեր խոստանում ու ետ չեն գալիս,

Այնքան եմ ատում, որ փոխարենը կարոտեմ նրանց,

Հեռանում եմ կամ մոռացության եմ ամեն ինչ տալիս-

Ատելը մե՞ղք է,

Ուրե՛մն կասեմ՝

Չե՛մ սիրում նրանց:

Ատում եմ լույսը,

Երբ ամեն ինչը ի ցույց է դնում,

Ատում եմ ճիշտը,

Երբ ձանձրացնում է, գլուխ է տանում,

Ատում եմ սերը,

Երբ տիրանում է, ոչ թե նվաճում,  
Ատում եմ հույսը,  
Երբ որ մեռնում է, թեկուզ և վերջում...  
Ներիք, Տիրամայր,  
Ներիք ատելուս ու դրա մասին գրելու համար,  
Երբ որ մեխում են ու մեղք չեն գալիս,  
Երբ մեղավոր են, մեղա չեն գալիս,  
Ու թե ատելս, էս դեպքում մեղք է,  
Որե՞մս կասեմ՝  
Ների՛ր, Տիրամայր...





## Ուզում եմ նորից

Ճշում ես կամա,  
Ու այդ աղմուկին ընտելանում ես,  
Թե դո՛ւ և թե նա,  
Բառեր ես ասում, որևէ մի բան ասելու համար,  
Քանի որ նրանց ստեղծման գործում,  
Ո՛չ սիրտը, միտքը և ո՛չ էլ հոգին չեն եղել ներկա,  
Այո՛, վիճում ես, ճշում, մարտնչում,  
Որ կողքիդ ժառ:  
Լռում ես կամա,  
Ու այդ լռությանն ընտելանալուց տագնապ ես զգում,  
Թե դո՛ւ և թե նա,  
Ոչ մի ձայն չկա,  
Ո՛չ լեզվով ասված,  
Եւ ո՛չ էլ սրտում ստուգում անցած,  
Չես ասում ժառ...  
Մեկ էլ խոսում ես ցած ընկած տոնից,  
Կամ էլ կիսատոն,  
Որն իրականում «ֆալշ»ի է նման,  
Կամ էլ պարզապես կոչվում է՝ զնա՛:  
Ուզում եմ նորից հանդիպել քեզ հետ,  
Որ նորից խոսենք բաժանման մասին,  
Բաժանման մասին խոսելուց զուսպ ես,  
Մի քիչ խեղճացած,  
Մի քիչ մեղավոր,  
Բայց քո այդ մեղքից ոչ նվաստացած:  
Ուզում եմ նորից հանդիպել քեզ հետ,  
Որ նորից խոսենք...

Սարսափեցնող է, հուսախաբ հորդոր,  
Բայց թո՛ղ կայանա այդ հանդիպումը,  
Գուցե և լռե՞ս... բաժանման մասին,  
Բայց...

Ուզում եմ նորից հանդիպել քեզ հետ,  
Որ նորից վիճես մաալուս մասին...



## Ուզում եմ փոխել

Ուզում եմ փոխել,  
Ոչ փոխարինել,  
Տեղերի բախշումը շրջանակիս մեջ,  
Որը մեկընդմեջ թուղթխաղ եմ կոչում,  
Ճիշտ չի բաժանվել  
Ու տասը թիվը հիմա իններից առաջ է կանգնում,  
Ութը՝ յոթերից,  
Այն, ով ինձնով է օրը սկսում,  
Ինձ անտեսողից հետո է կանգնում,  
Այն, ով իմ գրած ամեն մի բառը,  
Առնում է, լուծում, դրանով ապրում,  
Վերջում է կանգնում  
Ու դիրքն է զիջում,  
Զիջում է տեղը իմ կողքին կանգնած,  
Ամեն մի տողս իրեն վերագրած փաթեթիս «մեծ»ին՝  
Ուզում եմ փոխել տեղերը նրանց:  
Այն, ով իմ մեջ է կարմիրը տեսնում,  
Ով հավատում է միջիս արևին,  
Վերջում է կանգնում,  
Հետո է կանգնում ինձ սևացնողից,  
Ինձ հետ սև թղթով խաղացողներից՝  
Ուզում եմ փոխել տեղերը նրանց:  
Այն, ով իմ կյանքում Մեծ է ինձանից,  
Շարքայիներից հետո է կանգնում,  
Այն չորս վեցնյակից,  
Որոնք շրջված իննի են նման,  
Բայց չորսը իննյակ երբե՛ք չեն դառնում՝

Լուսնոսկու նման՝  
Ուզում եմ փոխել տեղերը նրանց,  
Ուզում եմ փոխել,  
Ոչ փոխարինել,  
Թող այդ փաթեթը կիսատ չմնա իմ շրջանակում:



## Չեմ ցանկանում

Չեմ ցանկանում կգակս վեր գոռոզ քայլել,  
Այլ ուղղակի,  
Չե՛մ ցանկանում գլուխ կախել,  
Չեմ ցանկանում շողալ, փայլել,  
Այլ ուղղակի,  
Չխամբել,  
Չե՛մ ցանկանում ի ցույց դնել,  
Այլ ուղղակի,  
Չթաքցնել,  
Չեմ ցանկանում բառեր ասել, ինչպես կենաց,  
Այլ ուղղակի,  
Մեկ բառ ասել կամենալով,  
Չեմ ցանկանում լի թոքերով անգուսպ խնդալ,  
Այլ ուղղակի,  
Աչք խնայել,  
Թե չպարել ձեռքերս վեր,  
Գոնե նստած ծափահարել,  
Թե չերգել՝  
Միրտ ունենալ երգ լսելու,  
Չեմ ցանկանում ձեռք բարձրացնել,  
Եթե անգամ պաշտպանվում եմ,  
Այլ ուղղակի,  
Չպայքարել,  
Թե չմեռնել,  
Գոնե ապրել,  
Մեռելահոտ ապրումները՝  
Չեմ ցանկանում:

# Ու ասեմ՝ ես էլ

Ուզում եմ դառնալ այն սերը կյանքում,  
Որը ցանկացաք,  
Մակայն չստացաք,  
Տամ ու նվիրեմ,  
Նվիրվեմ առանց ակնկալելու  
Այն, ինչ ինքս էլ երբեք չունեցա:  
Ուզում եմ շոյել, որպես ցավ մեղմող մայրական ձեռքեր,  
Որոնք ինքս էլ երբեք չունեցա:  
Ներողություն եմ  
Ցանկանում խնդրել ,  
Կյանքի փոխարեն  
Ձեր թաց աչքերից,  
Որ ձեր փնտրածը երբեք չգտաք,  
Ու ասեմ՝ ես էլ:  
Ոզում եմ հաշտեցնել  
Միմյանը հոգու հետ՝  
Ավարտ դնելով հոգուտ ոչ-ոքի,  
Զի նրանց վեճից մեջք է կորանում,  
Թե որդիներդ իրար դեմ ելնեն, Իրենց ոչ մի բան՝  
Քո սիրտն է կանգնում:  
Ուզում եմ, որ ձեր աչքերը սառչի, Իսկապես մարդ գա՝  
Արդարացի չէ սառչած նայելը անդարձ հեռացող  
Մարդկանց ետևից:  
Ու երևի թե դուք էլ ուզում եք  
Այն, Ինչ բոլորը  
Ու ասեմ...ես էլ...

## Պաշտում ենք

Դու պաշտում ես կուսակարմիր սկուտեղը,  
Ես պաշտում եմ՝ կուսապսակ օրիորդներին,  
Դու պաշտում ես մեծապատիվ նամուս բառը,  
Ես պաշտում եմ՝ մեծապատիվ նամուսովին,  
Դու պաշտում ես ոսկեկնիք գիտելիքը,  
Ես պաշտում եմ՝ առանց դիպլոմ գիտուններին,  
Դու պաշտում ես բախտը, թուղթը,  
Հավատում ես ճակատագիր գուշակողին,  
Իսկ այս դեպքում,  
Ես պաշտում եմ անհավատին,  
Դու պաշտում ես հարուստ կանանց,  
Ես պաշտում եմ՝ հարուստ հոգի որդեգրած տիկիներին,  
Դու պաշտում ես կնոջ գործը ուսին առած տղամարդկանց,  
Ես պաշտում եմ՝ կնոջ դերը կանանց թողած իգիթներին,  
Դու պաշտում ես լիառկոր ուտելիքը,  
Ես պաշտում եմ՝ սնունդ դարձած երգը հոգու,  
Դու պաշտում ես կյանքում միայն քո նմանին  
Իսկ ես նաև քո նմանին  
Ու դեռ մեկն է պետք է ասի,  
Թե երկուսն էլ պաշտել գիտե՞ն,  
Ինչո՞ւ հիմա ես չպաշտեմ ինձ նմանին:

## Վախենում եմ

Ուզում եմ ասել,  
Բայց վախենում եմ ճիշտ չեք հասկանա  
Ու վախենում եմ,  
Որ ասելիքս շեշտով կնկալեք  
Ու բառիս շեշտը,  
Բառիս փոխարեն իմ գլխին կգա:

Ուզում եմ լռել,  
Բայց վախենում եմ,  
Թե լռելը իմ,  
Մայրենի լեզվի արատ կկարծեք՝  
Ինչպիսիս չեք տա:

Ուզում եմ սիրել,  
Բայց վախենում եմ,  
Թե սիրելը իմ պաշտել կկարծեք,  
Ու սիրած մարդուս,  
Որպես նոր աղանդ,  
Կանեք ձեզ թեմա:

Ուզում եմ թողնել,  
Բայց վախենում եմ,  
Թե թողնելը իմ լքել կկարծեք  
Ու էլ հավիտյան,  
Զիջում մեղքերիս թողություն չեք տա:



Ուզում եմ գնալ,  
Բայց վախենում եմ,  
Թե գնալը իմ լքել կկարծեք  
Ու դարձիս դուռը մահ ու գերեզման,  
Էլ չեք էլ քանա:

Ուզում եմ խոսել,  
Բայց վախենում եմ, ճիշտ չեք հասկանա,  
Ավելի լավ է ես մենախոսեմ  
Ու հետո լսեմ.  
«Էս խելառն ո՞վա»:




## Ցավ

.... Երբ որ լսում են տեղ ունի ցավող,  
Ասում են ոչինչ,  
Թող հաբ ընդունի,  
Բայց ինչպե՞ս ասի,  
Որ դեղն իր համար շռայլություն է...  
Եվ զսպում է ցափս իր եղունգներով,  
Այն էլ մաշկի մեջ այդպես խրելով,  
Մինչև, որ ցավը իր անձը լքի,  
Մակայն և գիտի,  
Որ ցավը միայն կարող է լռել,  
Կամ կլռեցնի նոր եկող ցավի հզորությունը,  
Ինչպես մանուկն է լացը մոռանում,  
Երբ որ լսում է մոր հեկեկոցը:  
Ու նա էլ մարդ է ամենքի նման  
Ու ամենքի պես ունակ ապրելու,  
Բայց նաև գիտի,  
Որ տարբեր է, և  
Որ ինքն իր կերտած աշխարհը ունի,  
Որ չի ցանկանում,  
Որ իր մի «ես»ը, մյուս «ես»ի հետ խռոված ապրի,  
Որ խիղճը մեկ օր իրեն արթնացնի,  
Կրկին հիշեցնի,  
Որ ծնվել է նա,  
Քանի որ ինքը պետք էր աշխարհին,  
Մա է պատճառը,  
Որ կիտրոնից գատ,  
Ճոռոցին հակա ուրիշ դեղ չունի:

## Փակեք խնդրում եմ

Փակե՛ք դռներն ու պատուհանները,  
Թողե՛ք ես ինձ հետ քիչ մենակ մնամ,  
Նստեմ հատակին, աթոռին հենվեմ,  
Չորս պատերիս մեջ ինձ ազատ զգամ...  
Նորից կբացեմ տանս դռները,  
Նորից կնդունեմ ժպիտով, սրտանց,  
Կպատասխանեմ զանգերին բոլոր,  
Բայց հիմա թողեք քիչ մենակ մնամ:  
Փակե՛ք դռներն ու պատուհանները,  
Ոչ մի փեղկ անգամ բացված չթողնեք,  
Չորս պատերը, որ անազատության խորհրդանիշ են,  
Ինձ ազատում են այս ելք ու մուտքից,  
Հարցերից տափակ,  
Չբավարարված պատասխաններից,  
Չորս պատերը իմ,  
Անկյունս անգույն,  
Թե սևը գույն է՝ ուրեմն գունեղ,  
Վեր են ձեր ասած ազատությունից:  
Փակե՛ք դռներն ու պատուհանները,  
Թողե՛ք գտնեմ ինձ:  
Նորից կօգնեմ ձեզ,  
Մեկիդ ուսուցիչ, մյուսիդ ծառա,  
Բաղադրատոմսով օրվա ընթրիքի,  
Գուցե խորհուրդով՝  
Նոր գնված իրը ով որտեղ դնի,

Բայց հիմա փակե՛ք,  
Կլինի բերան, դուռ թե պատուհան,  
Թողե՛ք առանց ձեզ քիչ մենակ մնամ,  
Ո՛չ, չեմ նեղանա,  
Նևրոզյանս մեջ չեմ նեղվել անգամ,  
Հիմա, էլ ինչի՞ց պիտի նեղանամ,  
Փակե՛ք...  
Խնդրում եմ:



# Օտարվածը

Աղջիկ մի լույս,  
Աղջիկ բարի,  
Աղջիկ անմեղ ու անթերի,  
Ով թերություն ունի՝ այո,  
Բայց թերությունն անուն չուն...,  
Եթե ցավը թերություն է,  
Ուրեմն թերին նուրբ է ասված՝  
Արատավոր գոյություն է:  
Արատները ի ծնե չեն,  
Ձեռք են բերվել տարեց-տարի,  
Վատթարագույն փուլ են անցել,  
Դարձել թեմա բամբասանքի,  
Ինչպես կարմիր մի վահանակ,  
Ինչպես կանգառ ազդարարիչ,  
Արատները արգելել են սխալվելու իրավունքից,  
Չունի բառեր պաշտպանվելու,  
Միրտն է դնում սրի առաջ  
Ու ճակատը առ ճակատի,  
Արատավորն ո՞վ է կյանքում,  
Որ ճիշտն ասի նաև լավի...  
Բայց այս աղջիկն արատ կրող,  
Սովորել է իր արատով այնպես ապրել,  
Որ բամբասող հավաքություն,  
Այն կանանոց հավակույտում,  
Արատավոր այդ կնիքը պոկ են տվել իր անունից  
Ու կախ գցել պարանոցից,  
Որպես նշան հերոսության,  
Կամ էլ փոքրիկ շքանշան «արատավոր գեղեցկության»:

## Քո վերադարձը

Միշտ սպասել եմ քո վերադարձին,  
Հիմա նեղում է,  
Այն վերադարձը,  
Որի տոմսակը երկերես ունի,  
Այն վերադարձը,  
Որն ավելի շատ մեկնել է կոչվում,  
Որ շոշափում եմ,  
Բայց չեմ վայելում,  
Որ ողջունում եմ՝ չեմ ողջագուրվում:

Միշտ սպասել եմ քո վերադարձին,  
Հիմա նեղում է  
Այն վերադարձը,  
Որի ճամպրուկը ճարմանդներ չունի,  
Այն վերադարձը,  
Որ մոտենում է,  
Բայց ներս չի մտնում,  
Որ մոտ է գալիս լոկ մայրամուտին  
Ու ես չեմ տեսնում:

Միշտ սպասել եմ քո վերադարձին,  
Հիմա նեղում է՝  
Ոտնաձայները միշտ հեռացող են՝  
Այդ վերադարձի...

# Այսօր

1-Այսօր նույն վաղն է երեկվա համար,  
Այսօր այն վաղն է երկար սպասված,  
Որը խոստացար:  
Այսօր հե՛նց վաղն է՝  
Սույն ժամանակով կամ թե ապառնի,  
Նույն ապագան է հիմա կատարվում,  
Անցյալ օրերում ոչ հասկանալի:  
Այսօր այդ վաղն է,  
Որ լավ կլինի մի բան կփոխվի,  
Ճի՛շտ է, սիրուն է,  
Լուսաբաց ունի, նաև կիրակի,  
Բայց ո՛չ, տարբեր չէ,  
Էլի ու էլի անկատար եղած,  
Վաղվա թվով էլ անելիք ունի:  
Այսօր նույն վաղն է,  
Ու վաղվա օրով երեկ կլինի,  
Դե արա՛ մի բան,  
Որ վաղը չասես,  
Այ՛ եթե այսօր երեկը լիներ,  
Մի բան կանեի,  
Ու էլի հույսդ վաղվանը հենած՝  
Որ հենակ չունի,  
Վաղվան սպասի:  
Այսօրն ապագա է անցյալի համար,  
Այն ապագան է երկար սպասված,  
Որը խոստացար,  
Ամեն ինչ նույնն է, ինչպես անցյալում,

Սակայն շատերը էլ չկան մեզ հետ,  
Նորերն են ծնվում,  
Ում համար շունչ էինք վաղվա օրերի՝  
Անշունչ են հիմա,  
Ու շնչակտուր վաղն ենք կառուցում եկող նորերի,  
Որոնց անցյալն ենք, հին ենք՝ քալ լիցի,  
Մեր վաղը՝ նրանց,  
Այսօրով ապրիր:





# Առասպել

Ես ոչ դրախտին եմ կողմ,  
Ոչ էլ դժոխքին՝ հակա,  
Երկու տեղից էլ հրավեր ունեմ,  
Երկու տեղում էլ հարազատ մարդիկ:  
Եթե դրախտի հումը ես ընտրեմ,  
Հումը համ չունի,  
Բայց անարատ է,  
Իսկ թե դժոխքի եփվածը ընտրեմ,  
Վերջում ես պիտի կրակին եփվեմ,  
Մինչև վերջանա իմ միջի հումը:  
Հում ու անմշակ կյանք է խոստանում դրախտի դուռը,  
Բայց ես ի՞նչ անեմ դրախտում մենակ,  
Երբ դժոխքում է իմ սիրած տունը,  
Երբ խավարն է իմ նախնտրած լույսը,  
Ինձ ի՞նչ պիտի տա դրախտի լույսը:  
Հուժն ու անհամը կյանքում մշակած,  
Իրեն ապտակող ձեռքը ոլորած,  
Մարդուն է տրված տոմսակ դժողքի,  
Սառչած- ապրածը առաջին բոցից կհալչի իսկույն,  
Իսկ այն մյուսը,  
Թո՛ժն ու բովերը ոլորել գիտի,  
Ուստի Աստված ինքն է որոշում,  
Թե ում ճակատին ինչ գույնով գրի,  
Կամ ում մազի մեջ բախտը ոնց բացի,  
Որ հենց սկզբից,  
Դրախտ կամ դժողք նրանց մուտքագրի:  
Ինչ լավ է, որ այս առասպելներին,  
Ես չեմ հավատում,  
Բայց հաստատ գիտեմ,  
Որ դեպի դրախտ ու դժոխք տանող ճանապարհները,  
Նույն քավարանի միջով են անցնում:

## Ղեռ բառեր կան ողջ

Այդ լռության մեջ ղեռ բառեր կան ողջ,  
Բայց լռությունը քակտելու համար,  
Կոկորդ է քերում,  
Որքան էլ հագում, թոքը չի բացում,  
Քանզի ոչ մի տեղ մաշված բրոնխի խոր ներծծումից,  
Թուրուն չի վառվում:

Այդ հեգության մեջ,  
Խրոխտ կերպարի նիրհն է պատկերված,  
Ինչպես մարում է մոր ախորժակը,  
Ղեպ իր սնունդը թաթիկից ուղված:

Այդ մորմոքի մեջ,  
Մոր մոտ լինելու իդձն է ժանգոտված,  
Որի քերումը եղունգ է մաշում՝  
Սարսուռ հարուցում,  
Ինչպես բերանում բաց ներվ ունեցող մարդն է սարսուռ,  
Եղունգից ճաքած:

Թեթևության մեջ՝  
Բարակ իրանի,  
Ծանրակիր մտքի ոտքերն են դողում,  
Ու այդ տագնապից հոգոց հանելով,  
Թափանցիկ, ճկուն, մեղմ օրորվում է,  
Ինչպես տանիքից նետվող մարմինն է քիչ թեթևանում:

Այդ քաջության մեջ,  
Քրտնած ավերի շփումն է լսվում,  
Երբ ամեն մի նոր նամշահոտ դեմքից,  
Իրար են հավել,  
Ինչպես վանքերում:

Այդ ծիծաղի մեջ,  
Անձրև ներծծած ասֆալտի նման,  
Գորշ սիրտ է ապրում,  
Որի բաբախը փորոք է պատռում,  
Ու կծկվում է ակնակապիճը՝  
Նա չի ծիծաղում:

Այդ ներումի մեջ,  
Մոռացկոտության արատն է հյուսվում,  
Որը դիպչում է ճակատ կոչվածին՝  
Պորտալարի պես,  
Ու բախտ է կոչվում,  
Այդ ներումի մեջ,  
Ահ կա առ մահը,  
Ու գիշեր սիրող ծաղիկների պես,  
Մթության մեջ են գութն ի ցույց դնում:

Այդ կարոտի մեջ,  
Ճամփին սպասող աչք է կրճատվում,  
Այդ կարոտի մեջ,  
Եռուն երակի տրոփյուն չկա,  
Ու կկոցում է կարճատես մարդու փնտրելու նման՝  
Հեռվում մնացած մայր երակներից,  
Բիրն է պահպանում:

Ժառանգության մեջ,  
«Հարուստ պապերի» գեներն են ապրում՝  
Ուրիշ բան չկա,  
Ստեղծածի մեջ գոհություն չկա,  
Պրիչը ձեռքին աչքը կփակի,  
Ու թե ավարտեն կիսատը թողածը,  
Կկոչվեն գուցե ճոխ ժառանգություն:



# Լարախաղ

Փահլևանի պես երերուն խաղս այնպես հաշվեցի,  
Որ խաղուն մարդկանց դասին կարգեցին,  
Հավասարաչափ կշռված «ես»-իս  
Խաղացած խաղը լոկ լարախաղն էր,  
Ուրիշ խաղերը գլխիս խաղացին:

Ու ձեռքերը իմ,  
Դողդողուն քայլքիս  
Հենափայտերը երբեք չդարձան,  
Թիկնակ ասածը ողնաշարն էր իմ,  
Իսկ որպես հենակ, այդ ինձ հենվեցին:

Լարախաղաց էի գուցե քիչ առաջ,  
Բայց այդ լարերը նյարդերդ չեղան,  
Ո՛չ, կիթառ էլ չէին ու ոչ էլ քանոն,  
Այլ որպես կանոն հավասար «կես»-իս,  
Քանոնով գծված ուղիղ քայլերն էին չափավոր «ես»-իս՝  
Այս հաշվարկը իմ, մարտահրավեր գուցե կարծեցին  
Ու պարտվեցին:

Ու երկար փայտը ձեռքերիս միջի,  
Թրթռուն քայլքիս դասատուն դարձավ,  
Ինչպես ճիպոտե ձայնը ուսուցչի.  
Երբ որ բառերը նոր նախշեր առան,  
Գրվածքիս վերջում  
Մակագրության պես ինչ-որ բան դարձան...

Ու ձեռքերը իմ,  
Օրորուն քայլքիս  
Հենացույցերը երբեք չդարձան,  
Թե սա է խաղը,  
Գնամ խաղալու,  
Ես՝ լարախաղացս...



## Թող, որ մեկ անգամ

Թող, որ մեկ անգամ գրկեմ մարմինն այն,  
Որի ներս ու դուրսն ինձ ապրեցնում է,  
Գոնե մեկ անգամ հագեցնեմ կուրծքս,  
Թոչքի պատրաստ կարոտ թներիս:

Թող, որ մեկ անգամ գրկեմ մարմինն այն,  
Որի կարոտից, էլ ում ասես, որ չողջունեցի,  
Գոնե մեկ անգամ լիաթոք շնչեմ,  
Ներկայությունդ վկայող օդը:

Թող, գեթ մեկ անգամ գրկեմ մարմինն այն,  
Որի ինքեղենն ինձ խենթացնում է,  
Ու փոխարենը թույլ տամ գրկել ինձ,  
Որպես բումերանգ տրված վայելքի:

## Որ հարս դարձան իմ փոխարեն

Այսօր վարդերիս ճերմակն եմ գովում,  
Որոնք ճերմակել, բայց չեն թառամել,  
Արցունք են թափել և իմ փոխարեն,  
Որ ետ նետելու բախտ չեմ ունեցել:

Այսօր հենց ճերմակ վարդերն եմ գովում,  
Որոնց թարմության միակ վկան եմ,  
Միակ վկան են նաև լոկ իրենք,  
Առանց ճերմակի «թագ ու պսակի»:

Այսօր վարդերիս ճերմակն եմ գովում,  
Որոնք մազիս մեջ ճերմակ են ցողել,  
Ու բախտ բացելիս մեղմ թաքնվում են,  
Որ չկորցնեմ ճերմակս անմեղ:

Այսօր հենց ճերմակ վարդերն եմ գովում,  
Որոնք հարս դարձան և իմ փոխարեն,  
Ոչ փնջիկ, ոչ քող՝  
Ճերմակ վարդերն են պսակս երգել:

Այսօր ճերմակ են վարդերս բոլոր,  
(Ճերմակած հոգու կարոտ թարմություն),  
Գունատ են մի քիչ, փշոտ են ասես,  
Բայց շատ անմեղ են հենց ճերմակի պես:



## Նվիրվեմ առանց ակնկալելու

Ուզում եմ դառնալ այն սերը կյանքում,  
Որը ցանկացաք,  
Սակայն չստացաք,  
Տամ ու նվիրեմ,  
Նվիրվեմ առանց ակնկալելու  
Այն, ինչ ինքս էլ երբեք չունեցա:  
Ուզում եմ շոյել, որպես ցավ մեղմող մայրական ձեռքեր,  
Որոնք ինքս էլ երբեք չունեցա:  
Ներողություն եմ  
Ցանկանում խնդրել ,  
Կյանքի փոխարեն  
Ձեր թաց աչքերից,  
Որ ձեր փնտրածը երբեք չգտաք,  
Ու ասեմ՝ ես էլ:  
Ուզում եմ հաշտեցնել  
Միտքը հոգու հետ՝  
Ավարտ դնելով հոգուտ ոչ-ոքի,  
Զի նրանց վեճից մեջք է կորանում,  
Թե որդիներդ իրար դեմ էլնեն, Իրենց ոչ մի բան՝  
Քո սիրտն է կանգնում:  
Ուզում եմ, որ ձեր աչքերը սառչի, Իսկապես մարդ գա՝  
Արդարացի չէ սառչած նայելը անդարձ հեռացող  
Մարդկանց ետևից:  
Ու երևի թե դուք էլ ուզում եք այն,  
Ինչ բոլորը ու ասեմ...եւ էլ...

Այլընտրանք.....	3
Ասում էիր .....	6
Արի չխոսենք.....	8
Արցունքների փշից .....	10
Ես շտապեցի իսկ դու ուշացար.....	11
Երբ դու ես ներկա .....	13
Երբեմն .....	14
Երևի .....	15
Թեմա չկա .....	17
Ինչ լավ է, որ կաս .....	18
Իսկ ինչու հենց դու .....	19
Կրակ .....	20
Հակասություն .....	21
Հայելիս .....	22
Ճակատագիրդ անուն էլ ունի .....	23
Մենախոսություն .....	24
Մերժում .....	26
Նորից սիրում եմ .....	27
Չեմ մեղադրում.....	28
Չեմ սիրում.....	29
Չես փոխարինվում .....	30
Սեր ու խիղճ .....	32
Քեզ.....	34
Քեզ ի՞նչ անուն տամ .....	36
Ես ու դու .....	37
Դու իմ... Ծաղիկս .....	39
Եկար դու վերջում .....	40

Գիշեր .....	41
Նոյեմբերուհիս .....	43
Դեռ կգա մեկ օր .....	45
Եթե ուժերս հավաքեմ մեկ օր .....	47
Էլ չգնաք .....	48
Գիտեմ .....	50
Ինչո՞ւ չլինել .....	52
Լռության աղմուկ .....	53
Մենապար .....	54
Մի լոիր .....	56
Ներիր Տիրամայր .....	58
Ուզում եմ նորից .....	60
Ուզում եմ փոխել .....	62
Չեմ ցանկանում .....	64
Ու ասեմ՝ ես էլ .....	65
Պաշտում ենք .....	66
Վախենում եմ .....	67
Ցավ .....	69
Փակեք խնդրում եմ .....	70
Օտարվածը .....	72
Քո վերադարձը.....	73
Այսօր .....	74
Առասպել.....	76
Դեռ բառեր կան ողջ.....	77
Լարախաղ .....	80
Թող, որ մեկ անգամ .....	82
Որ հարս դարձան իմ փոխարեն .....	83
Նվիրվեմ առանց ակնկալելու .....	84



Գիրքը լուսապատճենվել և համացանցում է տեղադրվել [Գրքամոլ Նախաձեռնության](#) կողմից:

Բոլորիդ կողմից սիրված «[Գրքամոլ](#)»-ը մեկնարկել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը ընթերցասերների հարթակում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությունը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:



Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ ու օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող գործին, ապա գրեք մեզ [grqamol@gmail.com](mailto:grqamol@gmail.com) հասցեով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

**Գրքամոլ Նախաձեռնություն**

URL: [www.grqamol.am](http://www.grqamol.am), e-mail: [grqamol@gmail.com](mailto:grqamol@gmail.com)